

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի հունվարի 20-ին ժամը 14<sup>00</sup>-ին Պտղունք համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավար Կարապետ Արթենյանի հաշվետվությունը՝ 2014 թվականին կատարված աշխատանքների մասով: Հաշվետվությանը ներկա էին աշխատակազմի աշխատակիցները, դպրոցի տնօրենը, մանկապարտեզի վարիչը և կոլեկտիվը, համայնքի բնակիչները՝ թվով 20 հոգի: Ներկա էր նաև մարզպետարանի ներկայացուցիչ՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բաժնի պետ Ռադիկ Սարիբեկյանը: Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Կ.Արթենյանը՝ նա ներկայացրեց 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքները: 2014 թվականին Ասիական բանկի ծրագրով ավարտվեցին Պտղունք համայնքի խմելու ջրի համակարգի կառուցման աշխատանքները: Ներկայումս Պտղունք համայնքը ամբողջությամբ ապահովված է ամենօրյա քսանչորս ժամյա խմելու ջրով: 2014 թվականին ավարտվեցին Երևան-Էջմիածին խճուղու լուսավորության համակարգի անցկացման աշխատանքները: Կառուցվեց մոտ 250 մ լուսավորության համակարգ և ամբողջացվեց Երևան-Էջմիածին խճուղու համակարգը: Բացի այդ լուսավորության համակարգ անցկացվեց նաև Մաշտոցի փողոցում և վերանորոգվեցին գործող լուսավորության համակարգի չաշխատող լուսացիրները: 2014 թվականին համայնքի մանկական այգում տեղադրվեցին մանկական զվարճահարմարանքներ և համայնքի մանուկները հնարավորություն ստացան օգտվել դրանցից: 2014 թվականին համայնքում գործող խորքային հորից անցկացվեց ոռոգման համակարգ՝ դեպի համայնքի այգին, մանկական այգին, ինչպես նաև Պ.Մեակի փողոցի սկզբնամասը: 2014 թվականին խճապատվեցին և հարթեցվեցին Պտղունք համայնքի Անդրանիկի փողոցի վերջնամասը ինչպես նաև Ագաթանգեղոսի, Հայկի և Թամանյան փողոցի սկզբնամասերը: 2014 թվականի գարնանը ցրտահարվեց համայնքի տարածքում գտնվող ծիրանի այգիները, ստեղծվեց համապատասխան հանձնաժողով, կազմվեցին տուժած գյուղացիների ցուցակները և այն ներկայացվեց մարզպետարան: Կառավարության որոշմամբ նշված գյուղացիներին փոխհատուցվեց հողի հարկը և ջրի վարձի 50% : 2014 թվականին Մուսալեռ համայնքի հետ համատեղ վերանորոգվեց Մուսալեռի բարձրունքում գտնվող զոհված ազատամարտիկներին նվիրված հուշարձանը: 2014 թվականի մայիսի 9-ին Պտղունք համայնքի դպրոցի հետ համատեղ անցկացվել է միջոցառում՝ նվիրված մայիսյան հաղթանակների տարեդարձին, ծաղիկներ են դրվել զոհված ազատամարտիկների հուշարձանին, նրանց հարազատների հետ այցելություն է կազմակերպվել նրանց շիրիմներին: Զոհված



ագատամարտիկների ընտանիքներին տրվել է դրամական օգնություն: Համայնքի մանկապարտեզում 2014 թվականին անցկացվել են մի շարք միջոցառումներ՝ այդ թվում նաև մայրության և զեղեցկության, երեխաների պաշտպանության միջազգային օրվան և Նոր տարվան նվիրված հանդեսներ:

2014 թվականին անցկացվել է 11 ավագանու նիստ, համայնքի բնակիչներին տրվել է 2200000 դրամ դրամական օգնություն: Կատարվել է շուրջ 560 բնակիչների ընդունելություն, տրվել է 497 տեղեկանք: Համայնքի ղեկավարը իր խոսքով շնորհակալություն հայտնեց Արմավիրի մարզպետարանին՝ անձամբ մարզպետ պարոն Ա.Ղահրամանյանին՝ համայնքին աջակցելու համար: Այնուհետև ելույթ ունեցան համայնքի բնակիչները: Այսօր համայնքին հուզող ամենացավոտ հարցը նոր դպրոցի շինարարության հարցն է: Ի պատասխան նշված հարցին, համայնքի ղեկավարը տեղեկացրեց, որ Ազգային Ժողովի պատգամավոր Ս.Սարոյանի միջամտությամբ նոր դպրոցի կառուցման հարցը մտել է Ազգային ժողովի 2015 թվականի օրակարգ և նախատեսվում է 2015-2016թթ. կառուցել նոր դպրոց: Բնակիչները նշեցին նաև, որ գնալով շատանում են անմշակ հողերը՝ կապված ջրի սակավության և սակագնի հետ:

Իր խոսքում մարզպետարանի ներկայացուցիչ Ռ.Սարիբեկյանը համայնքում կատարված աշխատանքները գնահատեց դրական և խոստացավ բնակիչների կողմից բարձրացված հարցերը ներկայացնել մարզպետարան՝ համապատասխան լուծում տալու նպատակով:

Պատունք համայնքի ղեկավար՝

Կ.Արթենյան

Աշխատակազմի քարտուղար՝

Ա.Ավագյան



## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱՌ 01.01.2014Թ ՄԻՆՉԵՎ 01.01.2015Թ ԸՆԿԱՑ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Հարգելի համալսողացիներ հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հաջողվել է իրականացնել հետևյալ աշխատանքները:

Ֆինանսական մաս

Եկամուտներ(մուտքային մաս)

h/h	Հավաքագրված հարկի անվանումը	Պլանը կիսամյակ	Փաստացի կատարում	%
1	Գույքահարկ շենք շինություն	1550.0	2659.5	172.
2	Գույքահարկ փոխադրամիջոցներ	4050.0	5590.7	138.
3	Հողի հարկ	6500.0	6513.3	101
4	Վարձակալական հողի վարձ	350.0	361.4	104
5	Այլ ոչ հարկային եկամուտներ	780.0	882.0	113
6	Տեղական տուրքեր	150.0	477.3	319
7	Դոտացիա	21491.4	21491.4	100.0
8	Սուբվենցիա	56.4	56.4	100.0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>34927.8</b>	<b>38031.7</b>	<b>109</b>

Ծախսային մաս

h/h	Ծախսված գումարի ուղղվածությունը	Պլանը կիսամյակ	Փաստացի կատարում	%
1	Գյուղապետարանի աշխատավարձ	13385.1	13384.9	100
2	Պարգևատրում	2250.0	1985.4	89
3	Էներգետիկ ծառայություն	1750.0	1474.2	85
4	Կապի ծառայություն	300.0	278.0	93
5	Համակարգչային ծառայություն	200.0	114.6	58



6	Տեղեկատվական ծառայություն	100.0	91.0	91
6	Ընդ. բնույթի այլ ծառայություն	300.0	262.4	88
7	Շենք. և կառ. ընթացիկ նորոգում	800.0	250.0	32
8	Մեքեն. և սարք. ընթացիկ նորոգում	100.0	--	-
9	Գրասենյակային նյութեր	200.0	129.1	65
10	Տրանսպորտային նյութեր	550.0	550.0	100
11	Հատուկ նպատակային այլ նյութեր	600.0	290.0	49
11	Աղբահանում	800.4	800.4	100
12	Երիտասարդական ծրագիր	300.0	300.0	100
13	Սուբսիդիա	10556.4	10259.7	98
14	Սոց օգնություն	2200.0	2200.0	100
15	Շենքերի և շինությունն, կապիտ, նորոգում	427,6	423.9	100
16	Վարչական սարքավորումների ձեռք բերում	1800,0	1517.3	85
17	Նախագծահետ, ծախսեր	200,0	200.0	100
18	Նյութեր և պարագաններ	1000,0	982.7	99
ԸՆԴԱՄԵՆԸ		38355.4	35493.6	93

Պատվոնք համայնքի ղեկավար՝



Կ.Արթենյան